ե) Աստվածաշնչյան ինտերտեքստը

Աստվածաշնչյան ինտերտեքստը բնորոշ է հայ միջնադարյան բոլոր գրական տեքստերին՝ անկախ ժանրային պատկանելությունից ու բովանդակությունից, թեպետ յուրաքանչյուր ժանր և յուրաքանչյուր թեմատիկ տարածք յուրովի է իմաստավորել երևույթը: «Մտածել, հորինել և գրել բիբլիական բառ ու բանով,– դա քրիստոնյա մատենագրի գերագույն տենչն ու ձգտումն է եղել, նրա հեղինակային իդեալը»[28],– գրում է Կարապետ Մելիք-Օհանջանյանը:

Իբրև հայ միջնադարի հատկանիշներրը կրող երկ՝ Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատությունն այդ առումով չէր կարող բացառություն լինել, իսկ Հակոբ Օշականի այն նկատումը, թե՝ «Բացէք որևէ պատմիչ ու էջ պիտի չանցնի առանց Ս. Գիրքին մէկ տողին»[29], գոնե Դավրիժեցու պարագային միանգամայն հեռու է չափազանցությունից: Բայց անմիջապես էլ նկատենք, որ Դավրիժեցու պատմագրքի տարտղնվածությունը տարածական է նաև խնդրադիր երևույթի վրա: Այն համակարգված բնույթ չունի և հատուկ արժեք է ձեռք բերում, երբ դիտարկվում է ոչ թե ընդհանուր, այլ մասնավոր կառույցների համաձիրում:

---

28 ***Կիրակոս Գանձակեցի,*** Պատմություն Հայոց, տե՛ս «Առաջաբանը», էջ ԽԱ:

29 ***Յակոբ Օշական,*** Մեր մատենագիրները (վերլուծումներ), Անթիլիաս, 1987, էջ 47: